ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 05

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

24.02.2025թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին
Հ.Ավետիսյանը - մարզպետի տեղակալ
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Կ.Աշրաֆյանը - մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Ա.Մատինյանը, Մ.Խեչումյանը, Է.Հախվերդյանը, Գ.Բաղդասարյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Ա.Մալոյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

Ը ն թ ա ց ի կ հ ա ր ց ե ր

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

ՀՀ Լոռու մարզպետն առաջարկեց ստորաբաժանումների ղեկավարներին՝ ներկայացնել անցած ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

1. Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Կ.Ադամյանը ներկայացրեց մարզպետի աշխատակազմի կողմից հայտարարված մրցույթների, դրանց դիմորդների, ժամկետների, աշխատակիցների բացակայությունների, դրա նկատմամբ վերահսկողություն իրականացնելու մեխանիզմների վերաբերյալ տեղեկատվություն:

Մարզպետը հանձնարարեց ստորաբաժանումների ղեկավարներին՝ անհրաժեշտ ուշադրություն դարձնել կարգապահության պահպանմանը, հնարավորինս բացառել աշխատակիցների կողմից անհարկի և անհարգելի բացակայությունները և անհատական պատասխանատվություն կրել աշխատակիցների աշխատաժամանակի կառավարման ուղղությամբ:

2. Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջա-նառության և հասարակայնության հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից կատարված աշխատանքների, տրված հանձնարարականների կատարման ընթացքի, ժամկետային և ժամկետանց հանձնարարականների կատարման և դրանց վերահսկման ուղղությամբ տարվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

3. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մ.Դալլաքյանը, աշխատակազմի ՏԿ և ՏԻ հարցերի վարչության պետ Մ.Խեչումյանը, հողաշինության բաժնի պետ Է.Հախվերդյանը, իրավաբանական բաժնի պետի պարտականությունները

կատարող Գ.Բաղդասարյանը, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Ա.Հակոբյանը, առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռ. Պողոսյանը, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանը ներկայացրեցին ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

4. Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Մատինյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն.

Մարզպետը հանձնարարեց.

4.1 Ուսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն Վանաձորի թիվ 1 դպրոցի մանկավարժի կողմից աշակերտի նկատմամբ դրսևորած վարքագծի վերաբերյալ տեղեկատվություն և առաջարկություններ:

4.2 Համապատասխան ստորաբաժանումների և պատասխանատուների հետ քննարկել և ներկայացնել առաջարկություններ 03.03.2025թ. «Գրողների օրվա» և 08.03.2025թ. «Կանանց տոնի» միջոցառումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ:

5. Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի պարտականությունները կատարող Ա.Մալոյանը ներկայացրեց բաժնի կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես միջազգային կազմակերպությունների և կառույցների հետ տարվող, Լոռու մարզպետի աշխատակազմի հաշվետվության և սահիկաշարի ներկայացման, ինչպես նաև նախատեսվող հանդիպումների և հրավերների վերաբերյալ տեղեկատվություն:

Մարզպետը հանձնարարեց համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների և կառույցների ներկայացուցիչների հետ քննարկել և ներկայացնել առաջարկություններ «Լոռվա ձմեռ» մարզային միջոցառման անցկացման ձևաչափի փոփոխման և ընդգրկվածության ծավալի մեծացման ուղղությամբ, մասնավորապես առաջարկելով՝ քննարկել մարզի համայնքների մասնակցությունն իրենց լոգոներով, տաղավարներով և այլ նորարարություններով՝ այն առավել հետաքրքիր և մասսայական դարձնելու նպատակով:

6. Լոռու մարզպետի օգնական Հ.Հակոբյանը ներկայացրեց ԼՂՀ-ից տեղահանված Լոռու մարզում բնակվող քաղաքացիների հետ հանդիպումների, այդ ընթացքում բարձրացված հարցերի և խնդիրների, դրանց հնարավոր լուծումների վերաբերյալ տեղեկատվություն:

Մարզպետը հանձնարարեց հանդիպումների ընթացքում անդրադառնալ նաև վերոնշյալ քաղաքացիների բնակապահովման ծրագրերով իրականացվող հարցերին և ներկայացնել տեղեկատվություն:

7. Լոռու մարզպետի խորհրդական Ն.Թովմասյանը ներկայացրեց մարզպետի կողմից իրականացված շրջայցերի ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված տարաբնույթ հարցերի լուծման ուղղությամբ իրականացված աշխատանքների, ինչպես նաև սուբվենցիոն և այլ պետական ծրագրերով իրականացվող շինարարությունների նկատմամբ մոնիտորինգի և շրջայցերի ընթացքում հայտնաբերված թերությունների, բացթողումների և դրանց վերացմանն ուղղված՝ արված առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվություն:

Մարզպետը հանձնարարեց՝ շարունակել աշխատանքները այդ ուղղությամբ՝ համագործակցելով մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան համայնքային պատասխանատուների հետ՝ թերությունների վերացման համար առաջարկել կոնկրետ ժամկետներ և վերահսկել կատարման ընթացքը:

8. Մարզպետը հանձնարարեց մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանին.

8.1. Մինչև 05.03.2025թ. ներկայացնել վերջնական և իրատեսական տեղեկատվություն Սպիտակ համայնքի մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մանկապարտեզի գույքի մատակարարման ժամկետների վերաբերյալ:

8.2. Ներկայացնել առաջարկություններ քաղաքացիների սոցիալական աջակցության և սոցիալական տարբեր խմբերի հետ համագործակցության հարցերով զբաղվող

հանձնաժողովի կազմի և դրանում փոփոխություններ կատարելու, անհրաժեշտության դեպքում նաև գործառույթների փոփոխության կատարման վերաբերյալ:

8.3. Մեկամսյա ժամկետում ներկայացնել համայնքներում բակային տարածքների, զբոսայգիների, ապօրինի, ինքնակամ կառուցված օբյեկտների և շինությունների գույքագրման, բակերն ու փողոցները կամայական կամ ինքնակամ կառույցներից ազատելու վերաբերյալ տեղեկատվություն և առաջարկություններ՝ դրանց կանոնակարգման և օրինականացման նպատակով:

8.4. Համապատասխան կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակեր-պել քննարկումներ, համայնքներից պահանջել կոմունալ ծառայությունների մատուցման վերաբերյալ 2024թ-ին հայտարարված և անցկացված մրցույթների փաթեթները, ուսումնասիրել, անհրաժեշտության դեպքում նաև ստուգումներ իրականացնել՝ մարզի բոլոր քաղաքներում բարեկարգման, փողոցների և մայթերի սանմաքրման և այլ աշխատանքների կատարման ուղղությամբ:

8.5. Համայնքապետարանների համապատասխան պատասխանատու աշխատակից-ների հետ քննարկել համայնքում առկա զբոսայգիների կարգավիճակը և դրանց արդյունավետ օգտագործման ու գործունեության բարելավման նպատակով ներկայացնել առաջարկություններ այն հաշվով, որպեսզի ազգաբնակչությունը լիարժեք կարգով օգտվի և օգտագործի նշված տարածքները, զբոսայգիները լինեն հանգստի ու ժամանցի համար նախատեսված հարմարավետ վայրեր, և ստեղծվի ավելի բարեկեցիկ ու հարմարավետ միջավայր:

8.6. Մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների և համայնքապետարանների աշխատակազմերի համապատասխան ծառայությունների ներկայացուցիչների հետ համատեղ ուսումնասիրել համայնքներում առկա համայնքապատկան նախկին կառույցների օտարման կամ սեփականաշնորհման և դրանց օրինականության հիմքերը, անհրաժեշտության դեպքում համագործակցել իրավապահ մարմինների հետ՝ դրանց օրինականության ստուգման և իրավական գնահատական տալու նպատակով և ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ:

8.7. Մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների և համայնքապետարանների աշխատակազմերի համապատասխան ծառայությունների ներկայացուցիչների հետ համատեղ ուսումնասիրել և անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել փողոցային և ապօրինի առևտրի կասեցման, կամ դրա կանոնակարգման ուղղությամբ՝ այն նպատակով, որ փողոցային առևտուրը վերանա, իսկ ապօրինի առևտուրը օրինական դաշտ բերվի, որպեսզի քաղաքացիները ազատ տեղաշարժվեն փողոցներով ու մայթերով, քաղաքը նորմալ բարվոք տեսք ստանա:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2025-02-26 11:08:37 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99